

Համարը N 429	Տեսակը Ինկորպորացիա
Տիպը Որոշում	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 23.06.99./17(83)	Ընդունման վայրը Երևան
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը 10.06.1999
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ	Ստորագրման ամսաթիվը 10.06.1999
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը 10.06.1999
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 23.06.1999	Ուժը կորցնելու ամսաթիվը

Մայր փաստաթուղթ: ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ Ա...	
Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը`	Համապատասխան ինկորպորացիան`
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ Կ ... (02.04.2009	ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ Տ ...
-)	(02.04.2009 -)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՄՄԻԿ ՌԻՄԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«ՎԱՎԵՐԱՅՆՈՒՄ ԵՄ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
 10 հունիսի 1999 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 1999 թվականի N 429
 քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՄՄԻԿ ՌԻՄԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.
- Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրին (կցվում է):
 - Հայաստանի Հանրապետության նախարարություններին, գերատեսչություններին, մարզպետներին` սեյսմիկ ռիսկի նվազեցմանը վերաբերող աշխատանքներն իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրով:
 - Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Դարբինյան**

Հ Ա Մ Ա Լ Ի Ր Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՄՄԻԿ ՌԻՄԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր պետական ծրագիրը մշակված է սեյսմիկ ռիսկի նվազեցման ռազմավարության և Հայաստանում հաստատված ու գործող հետևյալ գերատեսչական և միջազգային ծրագրի հիման վրա`

- Հայաստանի բնակչության սեյսմիկ պաշտպանության ծրագիր, որն իրականացվում է Հայաստանի

Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունում՝ 1991 թվականից.

- DMTP ազգային ծրագիր, որը հաստատված է և ֆինանսավորվում է ՄԱԿ-ի կողմից 1999 թվականից և իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կողմից, բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ.

- Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի բնակչության սեյսմիկ պաշտպանության տարածաշրջանային ծրագիր, որը հավանության է արժանացել և ֆինանսավորվում է ՄԱԿ-ի կողմից, իրականացման սկիզբը, 1999 թվական, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հիմքի վրա.

- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության (ՀՀ ՄՊԱԾ), ՀՀ քաղաքաշինության նախարարության համակարգի կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մշակումները և նյութերը.

- միջազգային գիտաժողովների և սիմպոզիումների նյութերը՝ կապված սեյսմիկ վտանգի գնահատման և սեյսմիկ ռիսկի նվազեցման ոլորտում նորագույն նվաճումների հետ.

- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության միջազգային պայմանագրերով կատարվող աշխատանքների մշակումները և նյութերը:

Օրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններ, գերատեսչություններ ներկայացվող սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր հիմնախնդրի տարբեր ուղղություններով զբաղվող հեղինակային խմբի կողմից՝ պրոֆ. Ս. Բալասանյանի ղեկավարությամբ:

Օրագրի մշակման մեջ զգալի ներդրում են ունեցել Մ. Մելքունյանը, Ա. Առաքելյանը, Հ. Բաբայանը (Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալություն), Ս. Կարապետյանը, Տ. Մարգարյանը (ՀՀ քաղաքաշինության նախարարություն), Ս. Մարգարյանը («Հայինժնախագիծ» ՊՓԲԸ), Վ. Արզումանյանը («ՀայԳՀԻՄՇԿՊ» ՊՓԲԸ), Ա. Ալոյանը (ՀՀ քաղաքաշինության նախարարության ԳՀՆԻ), Գ. Մաթևոսյանը, Ա. Թարվերդյանը, Կ. Մարաֆյանը (ՀՀ ԱԲՎ), Ս. Օհանյանը, Բ. Ոսկանյանը (ՀՀ կառավարության աշխատակազմ), Ռ. Նիկողոսյանը (ՀՀ առողջապահության նախարարություն), Ա. Թադևոսյանը (ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն), Ա. Մարգարյանը (ՀՀ ՆԳ և ԱԱ նախարարություն), Ն. Միրզոյանը (Երևանի պետական բժշկական համալսարան), Ա. Դոլուխանյանը (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

Օրագրի բոլոր բաժինները գործնականում քննարկված են սեյսմիկ ռիսկի նվազեցման վերաբերյալ խոշորագույն միջազգային գիտաժողովներում, որոնցից գլխավորները դարձան՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության կողմից կազմակերպված երկու միջազգային համաժողովները՝ նվիրված 1988 թվականի Սպիտակի աղետալի երկրաշարժի 5 և 10-ամյակներին:

(Գլուխը փոփ. 19.03.09 N 261-Ն)

2. Հիմնախնդրի նկարագրությունը

Այսօր, XXI դարի շեմին, սեյսմիկության և սեյսմիկ ռիսկի հիմնախնդիրն առանձնահատուկ կարևորություն է ստացել, քանզի երկրագնդի բնակչության խտությունն այնքան է աճել, որ, մի կողմից, կտրուկ մեծացել է մարդկանց թիվը սեյսմաակտիվ գոտիներում, մյուս կողմից՝ բնակչությունն այդտեղ նվաճում է նորանոր տարածքներ:

Հաշվի առնելով, որ և բնակչության աճի, և սեյսմաակտիվ գոտիներում բնակչության տեղաբաշխման համար նոր տարածքների նվաճումը, երկուսն էլ չկառավարվող գործընթացներ են, դժվար չէ ենթադրել, որ քանակական փոփոխությունները կհանգեցնեն սեյսմիկ վտանգի և, դրանով պայմանավորված, սեյսմիկ ռիսկի նոր որակի:


Ուժեղ սեյսմիկ իրադարձությունների և դրանց հետ կապված մարդկային զոհերի, ինչպես նաև տնտեսական և սոցիալական ցուցումների վիճակագրությունը ցույց է տալիս, որ մենք մոտ ենք այն սահմանին, երբ սեյսմիկ ռիսկի քանակական փոփոխությունները կհանգեցնեն դրա նոր որակի: Այս նոր որակը կապված կլինի զանգվածային զոհերի, մեծ տարածքով ավերվածությունների, կենսաապահովման գծերի շարքից դուրս գալու, ՀՀ կառավարության կողմից քաղաքացիներին և համաշխարհային հանրության կողմից ուժեղ երկրաշարժից տուժած պետությանը գործուն օգնություն ցուցաբերելու դժվարությունների բարձր հավանականության հետ: Այսպիսի հեռանկարն առանձնապես իրական է տնտեսական դժվարություններ կրող և սեյսմաակտիվ գոտում տեղակայված այնպիսի մի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է:

Արաբական և Եվրասիական սալերի բախմամբ պայմանավորված առանձնահատուկ ֆիզիկաերկրաբանական պայմանները, ինչպես նաև լեռնային ռելիեֆն ու կտրուկ մայրցամաքային կլիման նախասահմանել են Հայաստանի տարածքում բնական վտանգների տեսակները՝ ուժեղ երկրաշարժեր, սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրհեղեղներ և այլն:

Հայաստանը, որը հանդիսանում է քաղաքակրթության հնագույն օջախներից մեկը՝ հնագույն գրով և մշակույթով, իր պատմության ընթացքում զարգացել է որպես գյուղատնտեսական, իսկ այնուհետև՝ արդյունաբերական երկիր: Արդյունաբերությունն առավելագույնս վերելք ապրեց 1960-1980 թթ., ժառանգություն թողնելով Հայաստանի ատոմակայանը, քիմիական և այլ տեսակների արդյունաբերական օբյեկտները, որոնք տեխնաձին վտանգների օջախներ

Էին հանդիսանում: Հայաստանի ծայրահեղ անհամաչափորեն բաշխված բնակչության բարձր խտությունը, նրա աճող ուրբանտզացիան, մի քաղաքական համակարգից մեկ այլին անցման հետ կապված սոցիալ-տնտեսական դժվարությունները բնական և տեխնածին վտանգների առկայության դեպքում հանրապետությունում աղետների առաջացման առանձնահատուկ բարձր վտանգ են ստեղծում:

Տարբեր աղետներից Հայաստանի տարածքում առավելագույն վնաս են հասցրել ուժեղ երկրաշարժերը, որոնք այստեղ հայտնի են մ.թ.ա. 18-15-րդ հազարամյակներից սկսած:



Երկրաշարժեր՝ 94%

Տրանսպորտային պատահարներ՝ 1,5%

Ջրհեղեղներ՝ 0,15%

Սելավներ՝ 3,15%

Սողանքներ և փլուզումներ՝ 1,2%

Ռադիոակտիվ ճառագայթում՝ 0%

Նկ.1 Հայաստանի տարածքում 1988-1998 թթ. ժամանակահատվածում վտանգների տարբեր տեսակներից առաջացած վնասը:

II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

3. Հիմնախնդրի ժամանակակից վիճակը

Հայաստանի տարածքում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով որոշվող սեյսմիկ ռիսկն այսօր հասել է ամբողջ պատմական ժամանակաշրջանում իր բարձրագույն մակարդակին:

Օբյեկտիվ գործոններ.

- Հայաստանի տարածքը գործնականում 100 %-ով գտնվում է սեյսմակտիվ գոտում.

- երկրաշարժերի ուժգնությունը հասնում է $M = 7.1$ -ի (գործիքային ժամանակաշրջան) և $M \geq 7.5$ (համաձայն պատմական և պալեոսեյսմիկ գնահատումների), օջախների միջին խորությունը կազմում է 10 կմ, բոլոր օջախները տարածականորեն կապված են մինչև 1 սմ/ տարի միջին տեղաշարժով ակտիվ խզվածքների հետ, ավերիչ երկրաշարժերի սևողությունն անբարենպաստ գրունտային պայմանների դեպքում կարող է հասնել մինչև 1 բուլեի $M \geq 5.5$ ուժգնությամբ երկրաշարժերի կրկնման միջին պարբերականությունը կազմում է 30-40 տարի:

Սուբյեկտիվ գործոններ.

- բնակչության բարձր խտությունը՝ 106 մարդ/կմ մարդկանց ծայրահեղ անհամաչափ բաշխման պայմաններում. հանրապետության բնակչության ավելի քան 40 %-ը բնակվում է Երևան քաղաքում,

- ոչ սեյսմակայուն բնակելի շենքեր, կառույցներ, կապի համակարգեր, այսինքն՝ դրանց սեյսմակայունության մակարդակն զգալիորեն ցածր է սեյսմիկ վտանգի մակարդակից,

- վտանգավոր օբյեկտներով հագեցվածությունը, ատոմակայան, քիմիական կոմբինատներ, ջրամբարներ և այլն՝ սեյսմակայունության այնպիսի մակարդակով, որը հետագա բարձրացման կարիք ունի,

- վտանգավոր արտադրությունների տեղադրությունը խիտ բնակեցված բնակավայրերի սահմանում կամ դրանց շատ մոտ,

- վատ գրունտների վրա կառուցված քաղաքներ և խոշոր բնակավայրեր, օրինակ՝ մեծությամբ Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրի (Լենինական),

- անցյալում (մինչև 1991 թ.) փաստացի դիտարկումների սուր պակասը, որոնք թույլ կտային ռեալ գնահատել երկարաժամկետ և ընթացիկ սեյսմիկ վտանգը,

- Հայաստանի Հանրապետության կառավարության անբավարար պատրաստվածությունն օպերտիվ գործողություններին երկրաշարժից անմիջապես առաջ, ընթացքում և հետո,

- բնակչության ծանոթ չլինելը երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո գործելու վարքականոններին,
- հանրապետությունում օպերատիվ տեղահանման, տուժածներին օգնություն ցուցաբերելու, երկրաշարժի հետևանքների վերացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների բացակայությունը,
- մի հասարակական կարգից մյուսին անցմամբ պայմանավորված ծանր տնտեսական խնդիրները: Ներկայիս և ապագայի Հայաստանի համար նշված պայմաններից ամենավտանգավորը դառնում է հնարավոր ուժեղ երկրաշարժը մայրաքաղաք Երևանի շրջանում:

Հայաստանում սեյսմիկ ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կողորդինացվող բոլոր նախարարությունների և գերատեսչությունների ջանքերի միավորումը:

(Գլուխը փոփ. 19.03.09 N 261-Ն)

4. Գլխավոր նպատակը և ծրագրի կողմից լուծվող հիմնական խնդիրները

Ծրագրի գլխավոր նպատակն է Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցումը մինչև բնակչության անվտանգությունն ու պետության կայուն զարգացումն ապահովող մակարդակը:

Ծրագիրն ընդգրկում է երեք հիմնական խնդիրների լուծումը`

1. Սեյսմիկ վտանգի կանխատեսում,
2. Սեյսմիկ ռիսկի գնահատում,
3. Սեյսմիկ ռիսկի նվազեցում:

4.1. Սեյսմիկ վտանգի կանխատեսումը բաղկացած է երկու հիմնական մասից`

- առաջնային սեյսմիկ վտանգի կանխատեսում,
- երկրորդային սեյսմիկ վտանգի կանխատեսում:

Առաջնային վտանգն իրենից ներկայացնում է գրունտի ցնցումներ, ճեղքվածքներ, երկրակեղևի խզվածքներ, այսինքն` երկրաշարժ: Երկրորդային վտանգը երկրաշարժերով պայմանավորված բնական և տեխնածին երևույթներն են:

Բնական երևույթների թվում են սողանքները, փլուզումները, սելավները, դիֆերենցված նստվածքները, գրունտի ջրիկացումը, փլուզումը: Տեխնածինների թվում են վթարները, հրդեհները, ջրհեղեղները:

Առաջնային վտանգի կանխատեսումն ընդգրկում է երկրաբաժամկետ և ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը: Երկրաբաժամկետ վտանգի գնահատումը նշանակում է հաջորդաբար աճող մասշտաբներում առավելագույնս հնարավոր ցնցումների տեղի և ուժգնության որոշումը Հայաստանի տարածքում:

Ընդհանուր սեյսմիկ շրջանացումը (ԼՄՇ) 1 : 500000 մասշտաբով:

Խիտ բնակեցված շրջանների և պատասխանատու օբյեկտների մանրամասն սեյսմիկ շրջանացումը (ՄՄՇ) $M = 1 : 200000$:

Խիտ բնակեցված շրջանների և պատասխանատու օբյեկտների սեյսմափկրոշրջանացումը (ՄՄՇ) $M = 1 : 10000$:

ՀՀ ՄՊԱՕ-ի կողմից միջազգային բոլոր ստանդարտներին համապատասխանող և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից սեյսմիկ վտանգի գլոբալ գնահատման ծրագրի շրջանակներում սեյսմիկ վտանգի համաշխարհային քարտեզում ընդգրկված երկրաբաժամկետ սեյսմիկ վտանգի գնահատումը ցույց է տալիս (նկ. 2), որ Հայաստանի տարածքում $M = 1 : 500000$ հարյուր տարվա ընթացքում կարելի է սպասել 8-10 բալ առավելագույն ինտենսիվությամբ երկրաշարժեր:

ՀՀ ՄՊԱՕ-ի կողմից ստեղծված Հայաստանի տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզը 1998 թ. հոկտեմբերին հանձնվել է Հայաստանի քաղաքաշինության նախարարությանը` որպես նորմատիվ փաստաթուղթ օգտագործելու նպատակով, քաղաքաշինության պլանավորման, շենքերի և կառույցների մինչև սեյսմիկ վտանգին համապատասխանող մակարդակի ամրացման, համապատասխան սեյսմակայուն շինարարությամբ բնակչության անվտանգ տեղաբաշխման գլոբալ հիմնախնդրի լուծման, սեյսմակայուն շինարարության իրականացման համար:

Ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը նշանակում է Հայաստանի տարածքում հնարավոր ուժեղ սեյսմիկ իրադարձության (1 \geq 7 բալ MSK-64 սանդղակով) տեղի, ուժգնության և ժամանակի կանխատեսում:

4.2. Սեյսմիկ ռիսկի գնահատումը համալիր խնդիր է, որի լուծումը պահանջում է նկատի առնել բոլոր վերը թվարկված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Այդ խնդրի լուծման առաջին մոտեցումը հանդիսանում է ՀՀ ՄՊԱՕ-ում ստեղծված և միջազգային փորձաքննություն անցած Հայաստանի տարածքի սայսմիկ ռիսկի առաջին քարտեզը, որտեղ հաշվի են առնված ռիսկի մեծության վրա ազդող Հայաստանի համար երեք կարևոր գործոններ (նկ.3.)`

- սեյսմիկ վտանգի հարաբերությունը շենքերի և կառույցների սեյսմակայունությանը`

- ավելի քան 10 կմ 2 մակերեսով յուրաքանչյուր բնակավայրում համեմատաբար ցածր սեյսմակայունությամբ շենքերի և կառույցների կողմից զբաղեցված մակերեսի հարաբերությունը Հայաստանի տարածքի ընդհանուր մակերեսին,

- ավելի քան 10 կմ 2 մակերեսով յուրաքանչյուր բնակավայրում համեմատաբար ցածր սեյսմակայունությամբ շենքերում և կառույցներում բնակվող բնակչության թվի հարաբերությունը Հայաստանի տարածքի ընդհանուր

բնակչության թվին:

Համաձայն նկ. 3-ում բերված քարտեզի, Հայաստանի տարածքում առավելագույն ռիսկի ենթակա է Երևան քաղաքը, որտեղ բնակվում է հանրապետության բնակչության զգալի մասը: Մեյսմիկ ռիսկի ճիշտ գնահատումը թույլ կտա մշակել դրա նվազեցման արդյունավետ ծրագիր:

4.3. Մեյսմիկ ռիսկի նվազեցումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը`

- ռիսկի նվազեցման համար իրավական հիմք ապահովող նորմատիվ փաստաթղթերի և համապատասխան օրենքների մշակում և ընդունում.

- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության հիմքի վրա սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոնի ստեղծում,

- վաղ ահազանգում,
- տարածքների խոցելիության նվազեցում,
- բնակչության նախապատրաստում (ուսուցում),
- պետական մարմինների նախապատրաստում ռիսկի կառավարմանը,
- բժշկական պատրաստվածություն,
- արագ արձագանքման ուժեր,
- փրկարարական աշխատանքներ,
- ապահովագրություն,
- բնակչության արտահոսքի կանխում:

(4.3 կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

5. Ակնկալվող արդյունքները

Սույն ծրագրի իրականացումը կտա հետևյալ հիմնական արդյունքները`

- կկազմավորվի նոր հեռանկարային երկարաժամկետ պետական քաղաքականություն` բնակչության անվտանգության և պետության կայուն զարգացմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցում,

- կստեղծվի պլանավորված, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կառավարվող Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգ, որը կիրականացվի նախարարությունների, գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների այսինքն` գործնականում ամբողջ հասարակության հետ համատեղ, ինչը համապատասխանում է այս բարդագույն խնդրի լուծման միջազգային մոտեցմանը,

- կբարձրանա պետության ընդհանուր կայունությունն ուժեղ ցնցումների և աղետների նկատմամբ.

- նախադրյալներ կստեղծվեն Հայաստանում բարձր սեյսմիկ ռիսկի չենթարկվող տնտեսության մեջ խոշոր ֆինանսական ներդրումների համար,

- կընդգրկվեն սեյսմիկ ռիսկի նվազեցման նորագույն տեխնոլոգիաներ, բոլոր ուղղություններով` սեյսմիկ վտանգի կանխատեսումից մինչև սեյսմակայուն շինարարություն և բնակչության նախապատրաստում, նոր տեխնոլոգիաների ներդրում, ինչը հնարավոր կլինի օգտագործել պետության գործունեության բոլոր մնացած ոլորտներում,


- կբարելավվեն տեխնիկական բազան և գիտելիքների բազան` ապահովագրության, գիտության և տեխնիկայի զարգացման համար:

Բերված ակնկալվող արդյունքները կարող են ձեռք բերվել միմյանց լրացնող ծրագրերի մշակման և իրականացման միջոցով` երեք հիմնական ուղղություններով`

1. Մեյսմիկ վտանգի կանխատեսման բնագավառում.


- ազգային դիտացանցի, ինչպես նաև տվյալների հավաքման, մշակման և վերլուծության ազգային կենտրոնի հետագա զարգացում,

- տվյալների բազայի և գիտելիքների բազայի հետագա զարգացում, սեյսմիկ վտանգի կանխատեսում` փորձագիտական համակարգերի և GIS-ի հիման վրա և դրա քարտեզագրում,



Նկ. 2

Հայաստանի Հանրապետության սեյսմիկ շրջանացման քարտեզ



Նկ. 3

Հայաստանի տարածքի սեյսմիկ ռիսկի քարտեզ

- Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը, պատասխանատու նախարարություններին, գերատեսչություններին և բնակչությանը՝ կանխատեսման տեղեկատվության փոխանցման հատուկ կանոնակարգի մշակում:

2. Սեյսմիկ ռիսկի գնահատման բնագավառում.

- տվյալների բազայի և գիտելիքների բազայի ստեղծում,
- ռիսկի լրիվ, բազմագործոնային վերլուծություն,
- GIS-ի հիման վրա սեյսմիկ ռիսկի քարտեզագրում:

3. Սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում.

- բնակչության սեյսմիկ պաշտպանության վերաբերյալ օրենքի մշակում,
- սեյսմիկ ռիսկի նվազեցման երկարաժամկետ ծրագրի իրականացման համար իրավական հիմք ստեղծող նորմատիվ փաստաթղթերի մշակում,

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության հիմքի վրա սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոնի զարգացումը՝ կենտրոնի և նախարարությունների, գերատեսչությունների, հասարակական և այլ պատասխանատու կազմակերպությունների հետ օպերատիվ կապի ցանցով,

- Հայաստանի ամբողջ տարածքով հնարավոր ուժեղ երկրաշարժի դեպքում վաղ ահազանգման համակարգի ստեղծում,

- տարածքների խոցելիության նվազեցում՝ գոյություն ունեցող կառուցապատման շենքերի և կառույցների սեյսմակայունության բարձրացման, ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված նոր ազգային նորմերի հիման վրա նոր սեյսմակայուն շինարարության, սողանքավտանգ տեղամասերի և արդյունավետ հակասողանքային ինժեներական կառուցվածքների ստեղծման, հանրապետության տարածքի ինժեներական պաշտպանության գծով այլ միջոցառումների միջոցով,

- բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացում՝ հատուկ հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման, համապատասխան գրականության և ձեռնարկների լույսընծայման և տարածման, երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողությունների վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման և օգտագործման, տարբեր տարիքային խմբերի մարդկանց հոգեբանական նախապատրաստման, օգնություն ցուցաբերելու անհատական և կոլեկտիվ միջոցների ուսուցման, Հայաստանի բոլոր շրջաններում բնակչությանը երկրաշարժերից և դրանց հետ կապված երկրորդային աղետներից պաշտպանությունն ուսուցանող պատրաստված հրահանգիչների ցանցի ստեղծման, ուսումնական տազնապների անցկացման միջոցով: Բոլոր թվարկված ծրագրերն

իրականացվում են բնակչության տարբեր շերտերի համար հասարակության յուրաքանչյուր շերտին առանձնահատուկ մոտեցում կիրառելով,

- պետական մարմինների նախապատրաստում ռիսկի կառավարմանը՝ ուժեղ երկրաշարժի կամ դրա վտանգի դեպքում պետական կառավարման մարմինների գործողությունների վերաբերյալ մեթոդական նյութերի մշակման, ուժեղ երկրաշարժի կամ դրա վտանգի դեպքում որոշումներ ընդունելու վերաբերյալ գործնական պարապմունքների անցկացման սցենարի մշակման, բնակչության սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդիր ակտերի և օրենքների նախագծերի մշակման, պետական կառավարման մարմինների ղեկավար աշխատակիցների նախապատրաստման և վերապատրաստման ուսումնական բազայի կատարելագործման և այլնի միջոցով,

- բժշկական պատրաստվածության բարձրացում՝ աղետների բժշկության տեղեկատվական-կառավարման ավտոմատացված ծրագրի մշակման և ներդրման, ազգային մակարդակով աղետների բժշկության ծառայության զարգացման ծրագրի մշակման և ներդրման, հնարավոր սանիտարական կորուստների (գոհվածների և վիրավորների) ռիսկի կանխատեսման նպատակով երկրաշարժերի դեպքում վնասվածքների առանձնահատկությունների վերլուծության, երկրաշարժերի հետևանքների վերացման համար անհրաժեշտ միջոցներն ու ուժերն արտացոլող բժշկական-աշխարհագրական քարտեզների մշակման, մինչև հոսպիտալային և հոսպիտալային փուլերում բժշկական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման, բժշկական ձեռնարկների, հրահանգների, մեթոդական դիտողությունների մշակման, մինչև հոսպիտալային և հոսպիտալային փուլերում բժշկական օգնություն ցուցաբերելու համար բժշկական մասնագետների (բժիշկներ և միջին բուժանձնակազմ) նախապատրաստման, ոչ բժշկական մասնագետներին մինչբժշկական օգնություն ցուցաբերելու համար նախապատրաստման, կադրերի պատրաստման գործընթացի կատարելագործման նպատակով անհրաժեշտ սարքավորումներով, տրանսպորտով ավտոնոմ արտագնա շարժական (դաշտային) հոսպիտալի ուսումնական մոդուլի ձեռքբերման միջոցով,

- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության և մասնագիտական փրկարարական ջոկատների և ՀՀ կառավարության առընթեր ՄՊԱԾ-ի հատուկ փրկարարական բրիգադի նյութատեխնիկական բազայի և հանդերձավորման հետագա զարգացում, փրկարարների պատրաստում և ուսուցում՝ միջազգային սերտիֆիկատների ստացումով, Հայաստանի այլ կազմակերպությունների փրկարարական ջոկատների ընդգրկմամբ ամենամյա 2-3 վարժանքների անցկացում,

- երկրաշարժերի դեպքում ապահովագրության համակարգի հիմքի ստեղծում՝ գործող օրենսդրական ակտերի կատարելագործման և նոր օրենքների, օրենսդրական և նորմատիվ ակտերի մշակման, տեղեկատվության բազայի և ապահովագրության վերահսկման կազմակերպման, բաժնետիրական ապահովագրական ընկերությունների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով,

- բնակչության արտագաղթի կանխում՝ երկրաշարժերի դեպքում արտագաղթի՝ գործընթացի ճկուն կարգավորման օրենսդրական բազայի մշակման, առաջին անհրաժեշտության ինֆրակառուցվածքի կայուն գործունեության ապահովման ծրագրի մշակման, արտագաղթի տեղեկատվական ցանցի տեխնիկական ապահովման, տեղեկատվական և կապի համակարգերի կատարելագործման, երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողությունների, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական խոցելիության նվազեցման ուսուցողական ծրագրերի մշակման և ներդրման միջոցով,

- անձի հոգեբանական խոցելիության նվազեցում՝ համապատասխան միջազգային կազմակերպություններից տեղեկատվության հավաքման, Հայաստանի Հանրապետության պայմաններում սթրեսի հաղթահարման մեթոդների մշակման, գոյություն ունեցող կենտրոնի հիմքի վրա ուսուցողական ծրագրերի մշակման միջոցով:

Սույն նախագծի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնելու ուժեղ երկրաշարժերին պետության և նրա բնակչության պատրաստվածության մակարդակը, ինչը իր հերթին, երկրաշարժերի հետևանքների վերացման ծախսերի նվազեցման միջոցով, կհանգեցնի երկրի առավել կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը:

(3-րդ կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

(Գլուխը փոփ. 19.03.09 N 261-Ն)

6. Հիմնական օգտվողները

Բնակչության ամենախոցելի շերտերը:

Աղետների կառավարման բնագավառում աշխատող մասնագետները:

Նախադպրոցական և դպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները:

Պետական կառավարման մարմինների ղեկավար աշխատողները:

Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար աշխատողները:

7. Ծրագրի ռազմավարությունը և դրա իրականացումը

Ռազմավարությունը

Ծրագիրը կազմված է ՀՀ կառավարությանն առընթեր ՄՊԱԾ-ի կողմից՝ բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, հանդիսանալով ծրագրի պատվիրատուն և պատասխանատու կատարողը,

պատասխանատվություն է կրում ծրագրի իրականացման համար: Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման ռազմավարության հիմքում ընկած են հետևյալ հիմնական սկզբունքները՝

- պատրաստվածության գերակայությունը վերականգնման նկատմամբ,
- պատրաստվածության ոլորտում սեյսմիկ ռիսկի նվազեցման բոլոր տարրերի հավասար գերակայությունը,
- ծրագրի իրականացման գործընթացում նախարարությունների, գերատեսչությունների, հասարակական

կազմակերպությունների և ընդհանրապես հասարակության մասնագիտաբար համակարգվող ջանքերի միասնականություն,

- սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնախնդրի բոլոր ուղղություններով ենթածրագրերի զուգահեռ իրականացում,
- ծրագրի միջազգայնացումը՝ դրա իրականացման մեջ լավագույն միջազգային և ազգային կենտրոնների ընդգրկման

միջոցով,

- արտասահմանյան դոնորների և ներդրողների ընդգրկում՝ ծրագրի տարբեր ենթածրագրերի ֆինանսավորման համար,

- ծրագրի բազմափուլային բնույթը՝ կազմված կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջնաժամկետ (մինչև 5 տարի) և երկարաժամկետ (մինչև 20 տարի) ենթածրագրերից, որոնք իրականացվում են տարբեր նախարարությունների և գերատեսչությունների կողմից:

Իրականացումը

Ծրագիրը կիրականացվի Հայաստանի տարբեր նախարարությունների, գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների կողմից (տես հավելվածը):

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունը պատասխանատու է ծրագրի իրականացման համար: Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին ծրագրի տարբեր բաժինների իրականացման համար ներգրավել տարբեր արտասահմանյան փորձագետների: Ծրագրի իրականացումը կբարձրացնի ուժեղ երկրաշարժերին պետության և բնակչության պատրաստվածության մակարդակը: Դա, համապատասխանաբար, կհանգեցնի հերթական սեյսմիկ իրադարձության վտանգի զգալի նվազեցմանը, ինչը, ընդհանուր առմամբ, կապահովի հասարակության կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը:

(Գույք փոփ. 19.03.09 N 261-Ն)

8. Հատուկ հասկացողություններ

Ծրագրի իրականացման ընթացքում նաև դրական տեղաշարժեր ձեռք կբերվեն հետևյալ ուղղություններով՝

- շրջակա միջավայրի վիճակի բարելավում և դրա պահպանություն,
- հասարակական կազմակերպությունների ակտիվացում և ընդգրկում ընդհանուր կառավարման համակարգում,
- երեխաներին կենսականորեն անհրաժեշտ հմտությունների ուսուցման կազմակերպում,
- հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնում, նրանց ընդգրկում ընդհանուր կառավարման համակարգում,
- Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների ակտիվացում և ընդգրկում

սոցիալական փոխհամագործակցության ոլորտում:

III. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման ժամանակակից համակարգի ստեղծում և Հայաստանում կառավարող պետական կառուցվածքի զարգացում՝ հասարակության կայուն զարգացման ապահովման համար և այդ համակարգի միջոցով երկրաշարժերի նկատմամբ մարդկանց և նրանց ունեցվածքի խոցելիության նվազեցում,

- հասարակության կայուն զարգացման և ուժեղ երկրաշարժերին նրանց պատրաստվածության համար պայմանների ստեղծում,

- Հայաստանի տարածքի սեյսմիկ ակտիվության պայմաններում գոյատևելու բնակչության ուսուցման արդյունավետ համակարգի ստեղծում:

IV. ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9. Անմիջական նպատակները

1. Անմիջական նպատակ 1.

Երկրաշարժերի և դրանց հետ կապված աղետների նկատմամբ բնակչության խոցելիության նվազեցում:

1.1. Արդյունք 1.

Սեյսմիկ վտանգի և դրա հետ կապված երկրորդային վտանգավոր երևույթների բարելավված կանխատեսում:

1.1.1. Միջոցառում 1.

Մեյամիկ վտանգի և դրա հետ կապված այլ երկրորդային վտանգների գոյություն ունեցող մոնիտորինգի զարգացում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյամիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության ազգային բազմապարամետր դիտացանցի հիմքի վրա:
(1.1.1. կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

1.1.2. Միջոցառում 2.

Տվյալների հավաքման և վերլուծության գոյություն ունեցող համակարգի զարգացում և կատարելագործում:

1.1.3. Միջոցառում 3.

Ազգային դիտացանցի կապի համակարգի ընդլայնում և կատարելագործում տարբեր հիերարխիային մակարդակներով:

1.1.4. Միջոցառում 4.

Մեյամիկ վտանգի վերաբերյալ ստեղծված տվյալների բազայի ընդլայնում:

1.1.5. Միջոցառում 5.

Մեյամիկ իրադարձության կանխանշանների և ուժեղ երկրաշարժի միջև օրինաչափությունների հաստատում:

1.1.6. Միջոցառում 6.

Համապատասխան փորձագիտական համակարգերի մշակում՝ սեյսմիկ վտանգի և դրա հետ կապված հնարավոր աղետների կանխատեսման համար:

1.1.7. Միջոցառում 7.

Մեյամիկ վտանգի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ քարտեզագրում:

1.1.8. Միջոցառում 8.

Մեյամիկ շրջանացման մեթոդիկայի վերամշակում և լրացում:

2. Անջմիական նպատակ 2.

Մեյամիկ ռիսկի գնահատում:

2.1. Արդյունք 1.

Մեյամիկ ռիսկի քարտեզներ:

2.1.1. Միջոցառում 1.

Տվյալների բազայի ստեղծում:

2.1.2. Միջոցառում 2.

GIS-ի հիման վրա ծրագրերի փաթեթի մշակում:

2.1.3. Միջոցառում 3.

Ռիսկի հաշվարկ և քարտեզագրում:

2.1.4. Միջոցառում 4.

Մեյամիկ ռիսկի քարտեզների թողարկում:

3. Անջմիական նպատակ 3.

Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցում:

3.1. Արդյունք 1.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Մեյամիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության և կապի օպերատիվ ցանցի հիմքի վրա ստեղծված սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոնը:

(3.1. կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

3.1.1. Միջոցառում 1.

Պատասխանատու ազգային կազմակերպությունների և շրջանների միջև կապի արդյունավետ միջոցների մշակում:

3.1.2. Միջոցառում 2.

Հայաստանի պայմաններում սեյսմիկ աղետի մասշտաբների և բնույթի գնահատման նորագույն տեխնոլոգիաների կիրառումը՝ փրկարարական և վերականգնողական աշխատանքների համար ուժերի և միջոցների բաշխման վերաբերյալ որոշումներ ընդունելու նպատակով:

3.1.3. Միջոցառում 3.

Սեյսմիկ ռիսկի նվազեցման բաղադրիչների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում:

3.1.4. Միջոցառում 4.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության լոկալ համակարգչային ցանցի ստեղծում:

(3.1.4. կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

3.1.5. Միջոցառում 5.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության և բոլոր պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների միջև կապի ցանցի ստեղծում:

(3.1.5. կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

3.2. Արդյունք 2.

Հայաստանի ամբողջ տարածքով ուժեղ երկրաշարժի դեպքում վաղ ահազանգման համակարգի ստեղծում:

3.2.1. Միջոցառում 1.

Ուժեղ երկրաշարժի վաղ ահազանգման համակարգի նախագծի մշակում:

3.2.2. Միջոցառում 2.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության ազգային դիտացանցի նորացում՝ վաղ ահազանգման համակարգում օգտագործելու նպատակով:

(3.2.2. կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

3.2.3. Միջոցառում 3.

Վաղ ահազանգման համակարգի համար ծրագրերի փաթեթի մշակում:

3.2.4. Միջոցառում 4.

Վաղ ահազանգման համակարգի համար ազդանշանային ցանցի ստեղծում:

3.3. Արդյունք 3.

Երկրաշարժերի նկատմամբ շենքերի և կառույցների, կենսապահովման գծերի և բնակավայրերի ինֆրակառուցվածքի նվազեցված խոցելիություն:

3.3.1. Միջոցառում 1.

Ուժեղ երկրաշարժերի նկատմամբ տարածքների խոցելիության նվազեցման ծրագրերի մշակում:

3.3.2. Միջոցառում 2.

«Ինժեներական հետազննումների շինարարությունում» ՀՀ նորմերի մշակում՝ ՍՄՇ նոր մեթոդիկայի և սեյսմակայուն շինարարության նորմերի հետ համաձայնեցված:

3.3.3. Միջոցառում 3.

ՀՀ քաղաքների և այլ բնակավայրերի սեյսմիկ միկրոշրջանացում՝ նոր մեթոդիկայի պահանջների համաձայն:

3.3.4. Միջոցառում 4.

ՀՀ քաղաքների և այլ բնակավայրերի կառուցապատման մանրակրկիտ քարտեզների կազմում և յուրաքանչյուր օբյեկտի նախագծային սեյսմակայունության որոշում:

3.3.5. Միջոցառում 5.

Գրունտների ուժեղ շարժման տվյալների բանկի ստեղծում և Հայաստանի տարբեր գրունտային պայմանների համար

սինթեզված ակսելերոգրամների ստացում:

3.3.6. Միջոցառում 6.

ՀՀ քաղաքներում և այլ բնակավայրերում շենքերի և կառուցվածքների փաստացի տեխնիկական վիճակի և վնասվածության աստիճանի հայտնաբերման նպատակով հետազննում՝ նոր մեթոդիկայի պահանջների համաձայն:

3.3.7. Միջոցառում 7.

Շրջակա միջավայրի վրա ուժեղ երկրաշարժերի ազդեցության գնահատման մեխանիզմների ստեղծում:
(3.3.7. կետը փոփ. 19.03.09 N 261-Ն)

3.3.8. Միջոցառում 8.

